ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ապրիլի 2026 թվականի N 61-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10–Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2026թ. ապրիլի 10-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի գյուղական բնակավայրերում գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման նպատակով գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԵԳԱՆՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

10 ԱՊՐԻԼԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2026 թվականի N 62-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշումը,<<Արմեն-Ավետ>> ՍՊԸ-ի կողմից 2026 թվականի ապրիլի 4-ին ներկայացրած գնային առաջարկը,Նարինե Դավիթավյան Ալբերտի Ա/Ձ-ի կողմից 2026 թվականի մարտի 30-ին ներկայացրած գնային առաջարկը և Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Թումանյան համայնքի ղեկավարին՝ համայնքի կարիքների համար համայնքի զարգացման ծրագրի և ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում լիզինգային եղանակով ձեռք բերելու.

1/Գյուղատնտեսական տրակտոր YTO-EX 854,
2/Գութան UNLU 5 խոփ,
3/ Սիլոսավարման սարք OZBUDAK:
2. 2026 թ. բյուջեից կատարել կանխավճար լիզինգի առարկայի արժեքի 20%-ի չափով:
3. Լիզինգի առարկայի արժեքը կազմում է տրակտորի համար11 900 000 (տասնմեկ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, գութանի համար՝ 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ, սիլոսավարման սարքի համար՝ 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ, լիզինգի առարկայի ընդհանուր արժեքը կազմում է 20 900 000 (քսան միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, որից կանխավճարի գումարը կազմում է 4 180 000 (չորս միլիոն հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:
4. Տեխնիկաների համար 2026-2032 թթ. ընթացքում յուրաքանչյուր տարվա համար համայնքի բյուջեում նախատեսել առնվազն լիզինգի գծով վարձավճարների չափով ծախսային համապատասխան հոդված՝ պահպանելով <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները,նախատեսելով նաև գործող լիզինգի վճարները:
5. Լիզինգի վարձավճարների վճարումները նախատեսել յուրաքանչյուր տարի ապրիլից-դեկտեմբեր ամիսներին,իսկ տոկոսագումարները՝ յուրաքանչյուր ամիս:
6.Ուժը կորցրած ճանաչել՝ Թումանյան համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 27-ի N 8-Ա որոշումը:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԵԳԱՆՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

10 ԱՊՐԻԼԻ 2026 թ.
Ք. Թումանյան